

ՀՈՍԱՆՇԱՅԻՆ ՇԱՐՔԸ ՄԻԶԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՁԵՌԱԳԻՐ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՆԱԶԻԿ ԼՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

XII–XIII դդ. վկայված «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորագրել նորավարժիցն սակս...» խորագրով ձեռագիր բառարանների հոմանշային շարքը ներկայացնելիս հարկ է առաջնորդվել միջինհայերենյան քերականների հոմանշի ըմբռնումով, որքանով նրանց մոտեցումներով և սկզբունքով էլ կազմվել են հոմանիշների ձեռագիր բառարանները: Ասել է քննութայն առարկա այդ բառարանների կազմութայն խարիսխը, ելակետը հոմանիշ եզրի այն ժամանակվա ըմբռնումն է: Իսկ ո՞րն է ըմբռնումը:

Միջինհայերենյան քերականները հոմանիշ հասկացութայն համար գործածել են փաղանունը՝ մեկնելով այն երկու առումով՝ ըստ իմաստասերների, այն է՝ փիլիսոփաների, և ըստ քերթողաց՝ քերականների: Ն.Ադոնցի հավաստումով Դիոնիսիոս Թրակացին փաղանունը վերագրում է (приписывает) ոչ թե փիլիսոփաներին, այլ քերականներին՝ բնութագրելով իբրև բազմանուն՝ «... որ ի գանազան անուանս զնոյն ցուցանէ...»¹:

«Արուեստ Դիոնիսեայ Քերականի» աշխատութայն հայ մեկնողները, ինչպես՝ Անանուն և Դավիթ Մեկնիչները, Ատեփանոս Սյունեցին, ընդունելով և հետևելով Թրակացու բացատրութայնը, միաժամանակ պարզաբանում են՝ «...յորժամ մի իր գոլով, բազում անուամբ անուանի...», «...որ են զոյգ անուանք ... որոց բնութիւն մի և անուանք այլ...»²:

Ես. Նչեցին, Յովհ. Ծործորեցին, Յովհ. Երզնկացին, իրենց քերականություններում քերականների տեսանկյունից պարզաբանելով փաղանունը, արձանագրում են՝ «...քանզի փաղանուն ասին, որ է զուգանունք ... որոց բնութիւնք, նոյնք և անուանք՝ այլևայլք»³:

Որոշակիորեն միջինհայերենյան քերականները համակարծիք են փաղանուն համարելով միևնույն հասկացությունը ցույց տվող, տարբեր արտասանություն ունեցող բառերը: Ասել է՝ հոմանիշ են համարվել երևույթը, իրողությունը, առարկան համակողմանի, բազմակողմանի բնութագրող այդ տիպի բառերն առանց սահմանափակման կամ տարբերակման (ի հակադրություն ժամանակակից հայերենում առանձնացվող բացարձակ, լրիվ, մասնակի և այլ հոմանիշների):

Վ. Արևելցին իր հերթին փաղանունը մեկնելիս հավելում է՝ «Ճարտասանի գործ է այս և զաւրութիւն, որ զմէկ իրն բազում անուամբ ցուցա-

1 Н. А д о н ц. Дионисий Фракийский и его толкователи. Пг., 1915, с. CLXX, 62, 19.

2 Նոյն տեղում, էջ 144, 109, 209:

3 Ե ս . Ն չ ե յ ի . Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրությամբ Լ. Նաչերեանի. Երևան, 1966, էջ 121: Յ ո վ հ . Ծ ո Ր Ծ ո Ր Ե Յ ի . Համառատ տեսութիւն քերականի, աշխատասիրությամբ Լ. Նաչերեանի. Լոս Անճելըս, 1984, էջ 222: Յ ո վ հ . Ե Ր Ղ Ն Կ ա Յ ի . Հաւաքումն Մեկնութեան քերականի, աշխատասիրությամբ Լ. Նաչերեանի. Լոս Անճելըս, 1983, էջ 217:

նէ և հարուստ, զոր քերթաւղքն «բազմանուն» ասացին...»⁴, իսկ Յովհ. Երզնկացին ամփոփում. «Դարձեալ կրկին մեկնութիւն տեսակաձև անուան դեղեցիկ իմն արուեստախաւսութեան բանիւ»⁵: Իրոք, բանաստեղծի ընտելութիւնը...

Քերականները ուսուցչապետել են կրթական օջախներում, եղել են գիտակ ուսուցչութեան պահանջներին ու դժվարութիւններին: Ըստ այդմ Վ. Արևելցու մեկնութիւնն ի մասնավորի արժեքավոր է հասկանալու համար բառարանների նպատակն ու անհրաժեշտութիւնը: Էսպէս հենց այդ էլ ակնարկում է նաև Հ. Ամալյանը՝ «Հանդէս բանաստեղծացը» համարելով «...նորավարժների, երիտասարդ բանաստեղծների, հավանաբար ճարտասանների, գեղարվեստական խոսքի կատարելագործմանը ու բառապաշարի հարստացմանը նպաստող բառարան...»⁶: Ուստի և ձեռագիր բառարաններում հոմանշային շարքն ընդգրկում է իմաստային առնչութիւն ունեցող, հասկացութիւնը համակողմանի (ըստ հնարավորին համապարփակ) բնութագրող բառեր՝ «կապված ընդհանուր հասկացութեամբ, միավորված ընդհանուր գաղափարով»⁷:

Ձեռագիր բառարաններում այդպես էլ ձևավորված են Աստված և Սատանա հասկացութիւնները բնորոշող Լոյս և Խաւար, այլև Խաղճ, Բոց և այլ բառերով սկսվող հոմանշային շարքերը: Ուշագրավ է Հ. Ամալյանի այս գիտարկումը ևս. Վտանգ(ք) ըռոով սկսվող հոմանշային շարքը բնութագրելիս նշվում է, որ բառերն առնչվում են գործողութեան և դրա հետևանքի դաղափարով, ասել է՝ վտանգի դեպքում զանազան ապրումներ և զգացումներ ցույց տվող բառերի իմաստային միասնութեամբ⁸:

Դիտարկմանը հարկ է հաճելել նկատելով, որ հոմանշային շարքն առավել հաճախ ձևավորվում է իմաստային բխեցումով՝ այդ դեպքում ինչ-որ չափով հիշեցնելով եթե...ասլա-ով պայմանահետևանքային հարաբերակցութիւնն արտահայտող կառուցները: Հոմանշային շարքում ընդհանրապես, անշուշտ, այսպիսի հարաբերութիւնն չկա, սակայն նշմարվում, գծագրվում է, որ գործողութիւնը (կամ երևույթը, հատկանիշը) ենթադրում, հանգեցնում է կամ էլ գրան հետևում է (երևի թե անվերապահորեն) մյուսը: Կարելի է ասել, որ հենց այդ օրինակափութեամբ էլ հետագայում ձևավորվել են հատկանիշների աստիճանականութեամբ հոմանշային շարքերը: Ուրեմն և դիմենք օրինակների.

Թշուառանալ. մաւրկանալ. տառապիլ. խոհարանալ. անկաճանալ. տուլայտիլ... Եթե որևէ մեկը թշվառանում, աղքատանում է, ապա տառապում է, տանջվում:

4 Վ. Արևելցի. Մեկնութիւն քերականի, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի. Երևան, 1972, էջ 116:

5 Յովհ. Երզնկացի. նշվ. աշխ., էջ 225:

6 Հ. Ամալյան. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.). Երևան, 1966, էջ 123:

7 Նույն տեղում, էջ 126-127:

8 Հոմանշային շարքը ներկայացնելիս որևէ ձեռագիր հիմք չի ընդունվել: Դրանք քաղված են շուրջ 20 ձեռագրերի (Մաշտոցի անվան Մատենադարան ձեռագիր NN 5596, 4612, 4149, 1654, 3937, 5919, 2371, 8198, 530, 7117, 266, 5925, 2335, 8106, 538, 532, 2372, 5126, 3197, 7250) համեմատութեամբ:

9 Հ. Ամալյան. նշվ. աշխ., էջ 128:

Դեզերել. դանդաղել. աղել. արմանալ. յապաղել. պղերգանալ. ծուլանալ... վեհերել... դողալ... տատամսել... կասկածել. երկնչիլ. գոփալ. զարհուրել. զահի հարկանել... սոսկալ... հոմանշային շարքում ևս դեզերել «տատանվել»-ը ենթադրում է ծուլանալ, կասկածել, որը և հանգեցնում է երկնչելու, զարհուրելու, սոսկալու. չէ՞ որ կասկածն ինչ-որ տեղ վախ է ծնում:

Ճիշտ այդպես էլ Տարակուսել հոմանշային շարքը, որն ավարտվում է կաղսիկազս «ահիւ», Խիրտսիխիրտս (խրտչիմ «յահի լինել») մակբայներով:

Ապա՝ Պահապան. պաշտպան. պատսպարան. ապաստարան. փրկիչ. ապաւէն. հայթայթաւղ. ողոքաւղ. մխիթար. աւգնական: Հարաբերակցությունը հասկանալի է. պահապանը պաշտպան է, ուրեմն և ամոքող, կարեկցող, քաջալերող, օգնող, օժանդակող... Կամ՝ Խաւար... մութ... մռայլ... տխուրք... ողբ... Խավարը, մութը տխրությունն, մռայլությունն են բերում, ուրեմն և ողբ (°). տխրությունն ու հուզմունքը ասես մշտապես հուզականորեն, զգայականորեն անբաժան են միմյանցից:

Հետաքրքիր է և Առիշեգ. խոտորնակ, կողմնակի. ի ձախ. գելակի շարքը՝ իմաստային համանման հոմանշային տարողությամբ: Ասում են ուղուց շեղվելը միշտ ձախ է, որն անհաջողության մատնվելու, ձախողվելու (գործը, մի բան ձախ գնալ կամ թեքվել), վատ տրամադրության, հաճախ սխալվելու, օրն անհաջող լինելու (ձախ ոտքի վրա վեր կենալ), անփուլթ, անխնամ, կիսատ-պուտ արվածի (ձախ ձեռքով անել)¹⁰ նշան է: Հիշեցնենք նաև, որ Նոր Հայկազեան Բառգիրքը Ահեակ բառի համար արձանագրում է՝ «Նմանութեամբ, որպէս Թիւր, յոռի, չար, անարգ, վատթար, վնասակար, վնաս»¹¹:

Բառը հոմանշային տարբեր շարքերում է հանդես գալիս նաև հիմնական և փոխաբերական իմաստներով, ինչպես՝ արբանեակ-ը առկա է Հնազանդ և Արբանեակ, հաստատել-ը՝ Բնաւորել և Կառուցեալ, տրոււղ-ը՝ Փանաքի և Խոնարհ բառերով սկսվող հոմանշային շարքերում: Այս դեպքում ևս նկատելի է վերը նշված երևույթը, այն է՝ հոմանշային շարքն ինչ-որ չափով հիշեցնում է եթե...ապա-ով պայմանահետևանքային հարաբերակցությունն արտահայտող կառուցյունները: Այսինքն՝ բառի ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածության պարագայում առկա է համանման հարաբերակցությունն. այսպես՝ ծածուկ բառն արձանագրված է Զանխուլ և Անհաս բառերով սկսվող հոմանշային շարքերում. եթե թաքուն, գաղտնի է պահվում, ապա նշանակում է՝ անհասանելի է: Նույնը տեսնում ենք տոչկել բայի դեպքում. այն հանդիպում է Պարհել և Ջնջել հոմանշային շարքերում. եթե արգելափակում են, ապա տանջում են, չարչարում, խոշտանգում: Այդպես էլ՝ թմբեալ (թմբրիլ)-ը, որ առկա է Ծամբուլ և Դեզերել հոմանշային շարքերում. ընդարմանալը, թուլանալը տատանում, կասկած է առաջացնում, որքանով եռանդով, խանդավառությամբ արվածը, թերևս, կասկածի տեղիք չի տա և այլն:

10 Ա. Ս ու Ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան. Երևան, 1975, էջ 375:

11 Նոր Հայկազյան Բառգիրք. Վենետիկ, 1836, էջ 30:

Հոմանշային շարքը ձևավորվում է բառերի իմաստային նրբերանգներով, որոնց բազմազանությունը, անշուշտ, լեզվի հարստության ցուցանիշ է. *ինչպես՝ Պիտալ. քարքել. տարփել. ըղձանալ. ցանկալ. տենչալ... փափագել, գեղձանալ: Ճողոպրեաց. գերծաւ. վրիպեցաւ. պրծաւ. փրթաւ: Ըմբռչխնել. բուծանել. տածիլ. կերակրել. պարենել և այլն:*

Այսպիսով, ի մի բերելով վերն ասվածը, կարելի է ընդունել, որ ուսումնական գործին նպաստելու համար, պայմանավորված ձեռագիր բառարանների գործնական բնույթով՝ գրանցում հոմանշային շարք կազմելու նախապայմաններից են ոչ միայն իմաստաբանական չափանիշը, այլև հոմանիշների փոխադարձ փոխարինելիությունը, կառուցվածքային պայմանավորվածությունը, հիմնական և փոխաբերական իմաստներով միևնույն բառի հետ գործածվելը:

СИНОНИМИЧНЫЙ РЯД В СРЕДНЕАРМЯНСКИХ РУКОПИСНЫХ СЛОВАРЯХ

НАЗИК ОГАНЕСЯН.

Р е з ю м е

При рассмотрении синонимичного ряда среднеармянских рукописных словарей необходимо руководствоваться восприятием среднеармянских грамматиков, поскольку рукописные словари составлялись по их принципам. Среднеармянские грамматики определенно придерживались единого мнения, считая, что синонимами являются слова, всесторонне, по мере возможности, всеобъемлюще, без каких-либо ограничений или дифференциаций характеризующие объект, событие, явление. К наблюдению нужно добавить следующее замечание: синонимичные ряды более часто формируются смысловой последовательностью, в этом случае в какой-то мере напоминая структуры, выражающие условно-следственные (если.... то....) соотношения.

THE SYNONYMOUS ROW IN THE MIDDLE ARMENIAN MANUSCRIPT DICTIONARIES

NAZIK HOVHANNISYAN

S u m m a r y

In the Middle Armenian manuscript dictionaries the synonymous rows were formed according to manner and principles of the Middle Armenian grammarians. They all followed the same opinion, that the synonyms thoroughly characterized the object and fact without any limitation or differentiation. We must add to observation the following remark: the synonymous rows are more frequently formed with semantic succession, in this case they remind the structure, expressing conditional-consecutive (if.... then....) correlation.